Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 389 ՇԱԲԱԹ 20 ԱՊՐԻԼ 1885 (Ն. Տ.) 2 ՄԱՅԻՍ 1885 17 ՐԷՃԷՊ 1302

40 ՓԱՐԱ.

ԳԱՆՈՒԹԻՒՆՔ

Դրանուցման տարեկան գինը մէկ անգամի համար 5 գրուշ, երկու անգամի համար 2 գրուշ եւ ամէն անգամուան համար զատ սակարկութիւն կրելով։

Օրագրոյս վերաբերեալ ամէնայն գրութիւն պէտք է ուղղել

«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԹՈՒՂԹԱԳՐՈՒՏԻՒՆ. Պայազիտ, Նորատունկեան խան։

Իսկ գումարները՝ Հեռաւեալ, Հասցէին

درعلیه‌ده نلطه‌ده نورادونکیان خانده

غزته ادارهسی

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY, Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարի	Հայաստան	Տարեկան	գրանցեալ	արժէքն 200
»	»	Վեցամսեայ	»	» 100
»	»	Եռամսեայ	»	» 50
Դուռնուռոց Հայոց եւ տեղական Թղթատարով տարեկան			»	» 240
Դուռնուռոց Հայոց եւ տեղական Թղթատարով վեցամսեայ			»	» 120
Օտար	երկրներ	Տարեկան	Ֆրանք	 56
»	»	Վեցամսեայ	»	 28

Դուռնս զրկուած լրագրաց համար ոչ ոեւէ գումար չի ստացուիր։

Խմբագրութեան զրկուած ոչ եւ ձեռագրաց համար չ'որուիր։

Դանուցմունք կընդունուին ԻՄԻՐԸՆ ԷՃԷՆՍԻ գործակալութեան վերամբ, Բարաքէոյ, Ցէյիրվէն խան

Կ. ՊՈԼԻՍ

ՈՒՐԲԱԹ 19 ԱՊՐԻԼ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԱՒԱԹԱՆԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿ

Ազգային կարեւոր դէպքերով լի շաբաթ մը անցուցինք։ Հոգելոյս Տ. Ներսէս Պատրիարքի յաղորդք բազմեցաւ իւր Աթոռի վրայ։ Մեծ գործ մ'էր այս որ լմնցաւ, և ուրախ ենք որ քան ամենայնի գոհացուցիչ կերպով լմնցաւ։ Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր ի Կ. Պոլիս ժամանումն և ընդունելութիւնը չատ փայլուն եղան։ Կառավարական իշխանութիւնք և մեր յոյն հայրենակիցք ամէն ուրեք արժանավայել ընդունելութիւն ըրին Ն. Սրբազնութեան։ Բայց ի վերքան զամենայն հայ ժողովուրդն ինք, թէ՛ յիմովը և թէ՛ ի Կ. Պոլիս, ինչպէս նաև այդ երկու քաղաքաց միջեւ, այնպիսի եռանդալից և մեծահանդէս ընդունելութիւն մ'ըրաւ, որ եթէ պատիւ կը բերէ մեր Նորընտիր Պատրիարքին, եթէ ցոյց կուտայ Ն. Սրբազնութեան արժանեաց նկատմամբ ազգային համբաւոյն բարձրութիւնն, ո՛չ նուազ պատիւ կը բերէ նաև զայս բոլոր ցոյցերը ինքնայօժար կազմակերպող հայ ժողովրդեան։ Այսպէս կը վայէ որ ժողովուրդ մը պատուէ իւր Ազգապետներ ու Հովուապետներ. զի յանձին Մարդոյ պատուած կը լինի Պաշտօնն իսկ. յանձին Պատրիարքի բարձրացուցած կը լինի Պատրիարքութիւնն իսկ։ Մեք մանաւորապէս գոհ ենք տեսնելով թէ Նորընտիր Պատրիարքը Կ. Պոլիս բերելու գործն անշուք բան մը չեղաւ բնաւին, և սակայն ազգի Ազգին վրայ նիւթական ծանր բեռ մը չդրուեցաւ ամենեւին։ Պատիւներ շռայլեցան Ն. Սրբազնութեան, ինչպէս արժան էր. բայց կեդրոնական Սընտուկը չուայլութիւն չբրաւ, և ընդհակառակն չատ համեստ և գիւրատար բաժին մը միայն ունեցաւ բոլոր այն կարգադրութեանց մէջ, զոյս ձեռնհաս մարմին մը պատուաբեր յաջողակութեամբ մը ծրագրեց և ի գլուխ հանեց։

Միւս կողմէ, Ն. Սրբազնութեան արտաքին երեւոյթն և ցուցած տրամադրութիւնքներ լաւագոյն տպաւորութիւնն ըրին զինք շրջապատողներուն և ընդհանուր հասարակութեան վրայ։ Տ. Յարութիւն Պատրիարք քաջառողջ է, և գործելու փափաք կը ցուցնէ։ Խորապէս կը զգայ Սահմանադրական Պարտէպ մը լինելու աննահանջելի հարկն, և առանց վերապահման, առանց վարանման կ'ուխտէ առաջի Աստուծոյ և մարդկան՝ հաւատարիմ մնալ Սահմանադրութեան։ Կը յիշենք թէ Ամեն. Խրիմեան Սրբազան, իւր Պատրիարքութեան առաջին օրէն մինչեւ վերջը, Սահմանադրութեան գծած շրջանակին անձկութենէն կը գանգատէր, և Սահմանադրական Ուխտն իսկ ինչ ինչ վերապահումներով կ'ուզէր ընել։ Կարծիք մ'է այս, և դուցէ Խրիմեան Հայրիկի պէս մտածող ուրիշ եկեղեցականներ ալ ունենանք։ Բայց Նորընտիր Պատրիարքն այդ կարծիքէ լինել չերեւիր, և կը յուսայ որ եթէ Սահմանադրութեան շրջանակին մէջ ազգային մարմինք օժանդակեն իրեն, կրնայ իրմէ ակնկալուած ծառայութիւնները մատուցանել Ազգին և եկեղեցւոյն։

Յիրաւի Տ Յարութիւն Պատրիարք լեզուանի, պերճախօս առեւնաբանի մը ձիրքերն ի հանդէս բերելու երեւոյթ չունի, և եթէ կային այնպիսիք որ Պատ իարքական Աթոռին վրայ ամէն բանէ աւելի Մուսայից այս ճիւղ մշակուած տեսնել կը բաղձային, այնպիսեաց ակնկալութիւնք գուցէ յոգս ցնդել սահմանուած են։ Բայց մեր հաստատ համոզումն այն է թէ, Պատրիարքին պահանջուած առաջին բանն է գործ, ո՛չ խօսք, և Պատրիարք մը որ գործելու պէտքը կը զգայ, որ իւր գործոց պատասխանատուութեան ըզգացումն ունի, ինչպէս նաև գործելու կարողութիւն, այսպիսի Պատրիարք մը յարմարագոյն է մեր այժմու կացութեան, և ինչ որ գիտենք Յարութիւն Սրբազանին անցեալին և ներկայ տրամադրութեանց նկատմամբ, կը ցուցնէ թէ Ազգն իւր գործոց գլուխը ճշդիւ այնպիսի Պատրիարք մը ունի այժմ։ Տ. Յարութիւն Պատրիարք վարժուած է գործելու, և անձային ու անշշուկ գործելու։ Գաւառային խիստ կեանք մը վարած է. գիշդակ ժամանակներ և անձկալի փորձեր տեսած է, որոյ զէրծ կը գտնուի փափկակազմ եկեղեցականներու յատուկ ինչ ինչ թերութիւններէ։ Ուխտն արտասանելէ անմիջապէս յետոյ գործի սկսաւ, և գիշեր ու ցերեկ Պատրիարքարանի մէջ անցուցանելով, իբրեւ աշխարհի նաւապետ մը որ միշտ նաւուն գլուխն է, կը յուսայ կարգի դնել գործերն, և ապահով ճամբու մը մէջ մտցուցանել Ազգին նաւն, որոյ զեկը շարժուս մէջ իւր ձեռքն յանձնուեցաւ այնքան վստահութեամբ և այնքան խնդութեամբ։ Յաջողութի՛ւն ուրեմն Յարութիւն Սրբազան Պատրիարքին։ Յաջ զուարթ՛ւն իւր դժուար ու կնճռալից պաշտօնին մէջ։

Կնճռալից ու դժուարին, յիրաւի։ Որչափ մեծ են պաշտօններն, այնքան չատ են կնճիռներն, այնքան բազմադիմի են դժուարութիւնք։ Անկարելի՞ պաշտօն մը չէ՛, թեթեւ գործ մը չէ՛ եռկոս միլիոն Հայերու Պատրիարքութիւնը։ Բայց նոյնքան մեծ են պատիւն ու փառքն ալ, որքան պաշտօնն իսկ դժուարին է և կնճռալից։ Հայ Ազգը նիթական մեծ բաներ չի կրնար նուիրել ի վարձատրութիւն իւր Պատրիարքաց որք յաջողած են իրենց յանձնուած գործոց բարւոք մատակարարութեան մէջ։ Բայց ամբողջ Ազգի մը սիրան երախտապարտ թողլու և դարուց ի դարս ազգային տարեգրութեանց մէջ երեւելի էջ մը գրաւելու փառքը փոքր վարձատրութիւն մը չէ Հայ Եպիսկոպոսի մը։ Եպիսկոպոսի մը համար որ գ'իւր բոլոր կեանքն նուիրած է Ազգին՝ ի՞նչ մեծ մխիթարութիւն քան զդալ թէ իւր կենաց վերջին մասին մէջ կրցա՝ գործն, խղճամիտ և արդիւնաւոր պաշտօնավարութեամբ մը գրաւել բոլոր Ազգին սիրտն և արժանանալ միանգամայն Տէրութեան թանկագին համարման՝ նպաստելով բարւոքման յարաբերութեանց ի մէջ Ազգին և Տէրութեան։ Մեք կը փափաքինք որ Տ Յարութիւն Պատրիարք իւր կենաց վերջին օրերուն մէջ, որուն երկարութիւն կը մաղթենք, կարենայ իւր սրտի խորերէն զդալ այս անգին մխիթարութիւն, որ չէր տրուած իւր ամեն նախորդաց։

Եթէ առանց վերապահման է որ Տ. Յարութիւն Պատրիարք ուխտեց հաւատարմութիւն Սահմանադրութեան, առանց պայմանի չէ՞ որ յանձն առաւ Պատրիարքական պաշտօնն։ Իզմիրի մէջ, Էրզրումի մէջ, Ժէ-Բէդէրէի մէջ և Մարշ եկեղեցւոյ մէջ կրկնեց ամեն առիթիւ թէ «յետ խորին մտածմանց» համարձակած էր ընդունել զայս ծանր պաշտօն՝ Ազգին և Ազգային Երեսփոխանական ժողովոյն անկեղծ և յօժարափայթ գործակցութեան ապաւինելով։ Այս գործակցութիւն էական պայման մ'է Պատրիարքական պաշտաման արդիւնաւորութեան, քանի որ մեծագոյն մասամբ լոկ ռաբոյական ոյժ մ'ունի Պատրիարքն, և իւր կամքն ու որոշումներ անխափան գործադրելու համար իւր տրամադրութեան ներքն չի գտներ այն նիւթական միջոցներ, որոցմէ ամեն աշխարհային իշխանութիւն ունի ըստ չափու իւր կարեւորութեան։ Այս նիւթական տկարութիւն կրնայ մինչեւ մէկ աստիճան փոխարին՛ել ազգայնոց բարեյօժարութեամբ, եթէ ազգային պաշտօնական մարմինք անկեղծօրէն ալակցին Ն. Սրբազնութեան։

Պատրիարքին ալակցելու պաշտօն ունեցող գլխաւոր մարմին մ'է Քաղաքական ժողովն, որոյ պաշտօնավարութեան պայմանաժամը լրացած է արդէն։ Բնական էր սակայն որ Ազգ. ժողովոյ այս չորեքշաբթի աւուր հանդիսաւոր նստին մէջ Քաղաքական ժողովոյ հրաժարականը չընդունուէր. որովհետեւ կարելի չէր գործերը երեսի վրայ թողուլ նոր Վարչութեան ընտրութենէն առաջ։ Խնդիր կայ որոշելու՝ նախ և առաջ՝ նոր Վարչութեան ձեւն ու կազմութեան եղանակն և ապա՝ նոր Վարչութիւն մ'ընտրելու։ Քաղաքական ժողովն յանձն առաւ վարել ազգային գործերը ցհաստատութիւն այս նոր Վարչութեան։

Նոր Պատրիարքին հաստատմամբ, շաբթուս մէջ վերջ գտաւ Պատրիարքական Տեղապահ Ռուսճուգլեան Դեր. Տ. Դէսպոտ Ծ. վարդապետին պաշտօնն, և Ն. Գերապատուութիւն վերստանձնեց Պատրիարքական Փոխանորդի նախկին պաշտօնը։ Դեր. Ռուսճուգլեանի պաշտօնավարութիւնն ընդհանուր գոհունակութիւն պատճառած է, և ուրախ ենք որ իւր հաւատարիմ ծառայութիւնք փարձատրեցան նաեւ Բ. կարգի Մէճիտիէ պատուանշանով մը։ Դեր. Ռուսճուգլեան խրդճամիտ և գործունեայ մէկ աշխատաւորն է Ազգին, և իւր երկարամանակեայ փորձառութիւնք և անձնական ծանօթութիւնք յոյժ օգտակար պիտի լինին Նորընտիր Պատրիարքին։ Ցանձին Ն. Գերապատուութեան և մի քանի ղլխաւոր պաշտօնէից Պատրիարքարանի, Տ. Յարութիւն Պատրիարք պիտի գտնէ փորձառու և հմուտ օժանդակներ, որք լաւ ուղղութիւն մը ստանալով, կրնան մեծապէս դիւրացընել Պատրիարքական պաշտաման ընթացիկ գործոց վերաբերող մասերը։

Երբ կը գրէինք այս տողեր, ծանութիւն չունէինք թէ Նորընտիր Պատրիարքն ո՞ր օր պատիւ պիտի ունենայ ներկայանալու Վեհ. Սուլթանին։ Սահմանադրութեան Հրդ յօդուածը, դնելէ յետոյ պատճէնն Ուխտին զոր Պատրիարքը կ'ընէ Սահմանադրութեան վրայ, կը յաւելու. «Անմիջապէս Տեղապահին «պաշտօնը կը դադրի, և Նորընտիր «Պատրիարքը՝ Բ Դրան հրաւէրին վրայ՝ «ուղղակի Օգոստափառ Կայսեր կը ներ«կայանայ, պաշտօնական կերպիւ իւր «պաշտօնը կը հաստատուի, և Բ Դուռն «երթալով, կը ծանուցուի։» Այսպէս, Նորընտիր Պատրիարքին պաշտաման հրապարակաւ հռչակմանն համար կարեւոր արարողութիւն մ'է Օգոստափառ Ինքնակալի ներկայացումը, Նորընտիր Պատրիարքին հաստատման արարողութեան ամբողջացուցիչ մի մասն է, և այդ պատճառաւ, նոր Պատրիարքին Բ. Դռնէն ի Պատրիարքարքարան երթալը մեծաշուք հանդէսով կատարել սովորութիւն է, և ամենայն անգամ եւս այնպէս պիտի լինի։ Կը յուսանք թէ չատ չանցած կը կատարուի այս արարողութիւն եւս, և Ամեն. Տ. Յարութիւն Պատրիարք առիթ կ'ունենայ անձամբ ներկայացնելու իւր հաւատարմութեան և անձնուիրութեան զգացմանց արտայայտութիւնն յաստ Դանդիգ մեծ ազգ. Ինքնակալին, որոյ հաւատարիմ ծառայներէն մին եղած էր այնքան երկար տարիներէ հետէ իւր վարած զանազան պաշտամանց մէջ։

* * *

Մինչ, Նոր Պատրիարքին հաստատմամբ, վերջ գտած է անստուգութիւն մը, անդին մեծագոյն անստուգութիւն մը կը տիրէ Ազգին ամենամեծ Աթոռին շուրջ։ Ո՞վ պիտի լինի մեր Կաթողիկոս։ Ընտրական գործողութիւնք սկսած են լեզմիածին. բայց արդիւնքը չենք կրնար իմանալ մինչեւ երկուշաբթի առաւօտ։ Ենոր հիւ կարգադրութեան մը, Աբէ-Եէ այս տարի եւս բաղեբախտութիւն ունի օրն օրին հեռագրաւ իմանալու ինչ որ տեղի կ'ունենայ յ'Էջմիածին, և որովհետեւ ուրիշ հայ թերթեր Աբէ-Եէի հեռագրերն օրն օրին ընդօրինակել սկսած են, այդ կարգադրութենէ կ'օգտին նա՛և ուրիշ թերթեր։ Մեր Էջմիածնի թղթակից կարեւոր լուրեր հեռագրեց շաբթուս մէջ։ Նախ, ծանոյց թէ եկեղեցական ընտրողաց մէջ զօրաւոր կուսակցութիւն մը կայ զՄակար Սըրբազան Կաթողիկոս ընտրելու համար։ Ն. Սրբազնութիւն, եթէ այս անգամ փափաքէր Կաթողիկոս ընտրուիլ, յարմարագոյն ընթացք մը չէր կրնար բռնել։ Կուսակցոյ վարժարանաց հանրաձանօթ խնդրոյն վրայ Սինոդին և ռուս Կառավարութեան միջեւ տիրող վէճին չմասնակցելով, յայտ Կառավարութեան դժուար դիրքի մը մէջ չէ ինկած։ Բայց աստի, չէ մեկնած Պեռարապիչէն, որով ընտրելիութենէ վերստին հրաժարական մատուցանելու հարկին մէջ եւս չի գտնուիր։—Մեր Թղթակից ծանոյց նաև թէ Մկրեան Հայրը ցուրտ ընդունելութիւն գտաւ Սինոդէն։ Այս զեկուցում ակնկալելի էր նախընթաց զեկուցումէն յետոյ։ զի Մկրեան Հօր պաշտօնն է Ընտրողական ժողովոյն մատուցանել Ազգ. ժողովոյ մէկ եռանուն ցանկն, յորում Մակար Սերգեանի անունը չկայ։—Բարերախտապէս, խօսքը բոլորովին Սինոդականաց և Միաբանութեան անդամ չէ։ Աշխարհական Պատգամաւորք, Թրիմեանական թէ Մելքիսեդեան, միահամուռ կը դիմադրեն այս եկեղեցական խմբակի յատակութեանց։ Թէ՛ որ կողմին խօսքը պիտի քաշէ, այդ է խնդիրը։—Մեր Թղթակցի երեկի հեռագրէն երեւցաւ թէ, Թրիմեան Սրբազանի ընտրելիութիւնն իւրերև հանելու համար տարօրինակ միջոց մը մտածուած է։ Լուր տարածուած է թէ Ն. Սրբազնութիւն բանտարկեալ է և Կ. Պոլիս։ Այդ լրոյ հեղինակներն այս վայրկեանս գիտեն արդէն թէ ձրի զրպարտութիւն մը միայն ըրած էին։ Այդ լրոյ հեղինակներն ի՞նչ զրպարտութիւնն իսկ ինչան մ'է թէ ջանքեր կը լինին Թրիմեանի դէմ։ Նմանօրինակ ջանքեր Մուրատեան Սրբազանի դէմ ես կը լինին եղեր, Ազգ. ժողովոյն և մասն գլխաւոր Ընտրելիներն իրենց հանելով մեր եռանուն ցանկն իսկ ջուրը ձգելու նպատակաւ։ Մեք կը փափաքինք որ Ընտրողական ժողովն յայտնէ Թուրքիոյ Հայոց իրաւունքն ու բաղձանքն, որ արտայայտեալ է եռանուն ցանկին մէջ. ուստի կը ցաւինք հակառակ ուղղութեամբ եղած ջանից համար։—Մեր Թղթակցի հեռագրէն երեւցաւ նաեւ թէ Ընտրողական ժողովոյն նախապատրաստական նիստն այս հիգշաբթի տեղի ունեցած է։ Ի բացակայութեան Մակար Սրբազանի, Սինոդին նախագահ Դեր. Բարամեան եպիսկոպոս մեր Ազգ. ժողովոյ Պատուիրակի պաշտօնը կը վարէ։ Թուրքիոյ Հայոց ուժ Վիճակներէ գրքեր ուղղուեր են Ընտրողական ժողովոյն։ Այս գրքեր ո՛չ այլ ինչ կրնան լինել բայց թէ յայտարարութիւն մը թէ Թուրքիոյ գաւառներն ուղղակի չեն կրնար մասնակցիլ ընտրութեան. այլ՝ քան Սահմանադրութեան՝ ի դիմաց իւրեանց արդէն մասնակցած է Ազգ. ժողովը։—Մակարեան կուսակցութեան գլուխ Դեր. Պարզեանց եպիսկոպոսը քննադատեր է Թուրքիոյ Հայոց և Ազգ. ժողովոյն ընթացքը։ Հեռադիր մը չէր կրնար պարունակել քննադատեալ կէտերը. բայց մարգարէութեան պէտք չկայ՝ գուշակելու համար թէ Աժտէրխանու Առաջնորդը՝ թերեւս հարիւրերորդ անգամ լինելով՝ կրկնած է այն սովորական առարկութիւն թէ, եթէ Թուրքիոյ Հայք կը բաղձային մասնակցիլ Կաթողիկոսական ընտրութեան, պարտէին հետեւել Պաշտենիոյ գծած եղանակին։ Եթէ Պարզեանց Սրբազան, իրեն վերագրուած ուշիմութեամբ և աղգասիրութեամբ, ասկէ աւելի բարձր մտածում մ'ունեցած է յայտնելու, հետաքրքիր ենք զա՛յն իմանալ։—Մեր Թղթակից չատ գոհ եղած է Դեր. Բարամեան եպիսկոպոսի ժողովոյ Նախագահին՝ բռնած ընթացքէն, որ ի մասին Թուրքիոյ Հայոց իրաւանց, «յոյժ գովելի» է եղած։ Թէեւ մեր Թղթակից աւելի մանրամասնութիւն մը չի տար, բայց գուշակելի է թէ Ն. Սրբազնութիւն փաստարանած է Ազգ. ժողովոյ եռանուն ցանկն ընդունելու պէտքն։ Ակէ անմիջապէս յետոյ, երբ մեր Թղթակից կը յարէ թէ «Մակարեանք տկարանալու վրայ են», կարելի է հետեւցնել թէ, Դեր. Բարամեան Սրբազանի խորհրդաւորութիւնները Դեր. Պարզեանցի առարկութիւններէն աւելի տպաւորութիւն ըրած են ներկայից վրայ։ Տեսնե՞նք թէ ո՞ւր կը յանգի այս ընտարական պայքար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՈՒՆԱՆ ԽՆԴՐԻՐԸ

Մեր երեկի թուով իրաւունք ունէինք կանխահաս կամ մտացածին համարելու ինչ ինչ զրոյցներ, զորս Մանչեսթրեան նախընթաց օրն հրատարակած էր, և որք պատերազմն անխուսելի և գրէթէ արդէն վճռուած կը ցուցնէին։ Ինչպէս ոնթերցողք տեսան մեր երեկի թուով Հեռագրաց բաժնին մէջ հրատարակուած վերջին հեռագրերէն, խաղաղութեան յոյսերն աւելի զօրաւոր են, քանի որ Անգլիա առաջարկած է կարգադրութեան հիմքը, որոյ վրայ համաձայնութիւն կրնայ գոյանալ, և ըստ

—= 59 =—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԷՐՆ

ԿՐԱՆԹ ՆԱԻԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՐ

ԳԼՈՒԽ ԻԵ.

ԱՏԼԱՆՏԵԱՆ

—Տիկին Էլէնա և օրիորդ Կրանթ ձեզ կ'սպասեն շոգենաւին մէջ, պատասխանեց մակրկին պէտք։ Բայց չաւենք, Միսի՛բա, վայրկեան մ'իսկ չուշնինք կորսնցնելու, վասն զի տեղատուութիւնն զգալի լլինի կ'սկսի։

Վերջին գրկախառնութիւնք չտալեցան Հնդկին։ Թալքալ ընկերացաւ իւր բարեկամց մինչեւ ի մակրկին, որ ծովուն մէջ քաշուեցաւ։ Երբոր Ռոպէրթ մակրկը կը մնար, Հնդկին իւր բազկաց մէջ առաւ զայն և գորովանք երեսը նայեցաւ։

—Այժմ գնա՛, ըսաւ, դու մարդ մ'ես։

—Մնաս բարեաւ, բարեկա՛մ, մնաս բարեաւ, ըսաւ անգամ մ'ալ Կէլնա։

—Ալ չպիտի՞ տեսնենք վերար, գոչեց Բականէլ։

—Քո՞ւթ յաղթ (*), պատասխանեց Հնդկը ձեռքը դէպի երկինք վերցնելով։

Այս եղաւ Հնդկին վերջին խօսքն, որ կորաւ հովին շնչման մէջ։ Մակրկը բացուեցաւ եւ ծովուն տեղատուութենէն յարձակուելով հեռացաւ։

Երկար ժամանակ Թալքալի անշարժ պատկերն երեւցաւ ալեաց փրփուրներուն մէջէն։ Յետոյ նորա բարձր հասակն հեռագնահետ փոքրանալով աներեւոյթ եղաւ իւր միտքեայ բարեկամաց աչքէն։

Մէկ ժամ յետոյ, Ռոպէրթ ամենէն առաջ կը վերելնէր Տէնֆան շոգենաւն և Մարի Կրանթի պարանոցը կ'ընկնէր, մինչ շոգենաւին նաւատիներն ու պաշտօնատարներն օդը կը լցնէին իրենց ցնծագին հուրռանոցով։

Այսպէս կատարեցաւ Հարաւային Ամերիկայի այս ուղեւորութիւն՝ ճշդապէս ուղիղ գծի մը վրայ։ Ոչ լեռներն, ոչ գետերը չկրնին խոտորեցնել, զուղեւորներն իրենց անդրդուելի ճանքէն։ և եթէ մարդկային թշնամութեանց և շարժամութեանց դէմ մաքառելու Հպարտաւորուեցան, տարերք, յանախ մղեցնելով անոնց դէմ, գժնդակ փորձերու ենթարկեցին անոնց մեծանձնական անվեհերութիւնը։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ՄԱՄՈՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

ՎԵՐԱԴԱՐՁ Ի ՇՈՊԵՆԱՒԷՆ

Առաջին վայրկեանները նուիրուեցան զիրար վերտին տեսնելու երջանկութեան։ Լորտ Կէնարվան չէր ուզած որ իրենց հետտխուզութեանց անյաջողութիւնը պատճէնէր իւր բարեկամաց սրտին ուրախութիւնն։ Այս պատճառաւ իւր առաջին խօսքը սա եղաւ. «Լաւ ուտութիւն, բարեկա՛մք, վատահութիւն։ Կրանթ նաւապետ մեզ հետ չէ, բայց աներկրայ ենք որ պիտի գտնենք զայն։»

Այսպիսի յայտարարութիւն մը պէտք էր, որպէս զի Տէնֆանի ուղեւորք չվհատէին։

Արդարեւ, երբոր մակրկը շոգենաւին կը մտնեար, տիկին Էլէնա և Մարի Կրանթ տագնապալի անձկութիւններ կրած է։ Գոնեակին բարձրէն կը հարէին մակրկին մէջ գտնուողները։ Մարի Կրանթ մերթ կը յուսահատէր, մերթ ալ, ընդհակառակն, կը կարծէր տեսնել դիւր հայր։ Սիրտը կը տրոփէր, չէր կրնար խօսիլ, հազիւ ինքզինք տարի վրայ կը բռնէր։ Տիկին Էլէնա իւր թեւոց մէջ կ'առնուր զայն։ Ճոն Մանկլըս ֆանոց մտ կեցած էր լուն. իւր նաւատական աչերն, որք յոյժ վարժ էին հեռակայ իրերը ճանչելու, չէր տեսներ զկը բանթ նաւապետ։

—Ահա, հոն է, կուգայ հայրս, կը մրմնջէր աղջիկը։

Բայց մակրկը տակաւ կը մօտենար, և պատրանքն անհնարին եղաւ։ Ուղեւորք դեռ հարիւր դրիչաչափ հեռի էին շոգենաւէն, ոչ միայն տիկին Էլէնա և Ճոն Մանկլըս, այլ և նոյն ինքն Մարի Կրանթ, աչերն արտասուօք ողողեալ, ամեն յոյս կորուսած էին։ Ժամանակ էր որ Լորտ Կէնարվան հասնէր և վերոյիշեալ յուսատու յայտարարութիւնն ընէր։

Առաջին գրկախառնութիւններէն յետոյ, տիկին Էլէնա, Մարի Կրանթ և Ճ Մանկլը սեղանի մը առացան ուղեւորութեան գիւղաւոր դէպքերուն վրայ, և ամեն բանէ առաջ Կէնարվան խնդացուց անոնց ծովէն եղած գրուութեանց նոր մեկնութիւնն, որ ծաք Բականէլի կորսվանութեան արդիւնքն էր։ Նաեւ գովեստ խօսեցաւ Ռոպէրթի մ'ալ, որով Մարի Կրանթ կրնար պանծալ իրաւամբ։ Քաջալերութիւնը, անձնուիրութիւն, կրաւ վանգներու գրուատեաց յիշեց Կէնարվան, այնպէս որ պատանեակ չէր գիտեր ո՛ւր ծածկուիր, եթէ երբոյր թեւերն ապատան չանծային իրեն։

—Պէտք չէ կարմրիլ, Ռոպէրթ, ըսաւ Ճոն Մանկլը։ Իշխիւ Կրանթ նաւապետին արժանի որդի վարուած ես։

Եւ թեւերը Մարիի եղբօրն երկինքներով տիեզերքն անոր այտերուն յեցուց, որ դեռ թաց էր օրիորդին արտասուքէն։

Ծանոթութեան համար միայն կը յիշուի սատ հպարապետին և աշխարհագրին ստացած ընդունելութիւնն, ինչպէս նաև այն յիշատակն որով պատուեցաւ տղուաքանչն Թալքալ։ Տիկին Էլէնա ցուցեցաւ որ չէր կրնար սեղմել այն քաջարի Հնդկին ձեռքը։ Մաք Նոպս, առաջին սրտազեղումներուն յետոյ իւր խցիկը քաշուած էր՝ ինքզինքը հանդարտ և անդրդուելի ձեռքով մը սանրելու համար։ Իսկ Բականէլ, մէկէն առ միւսը կը թռչտէր մեղուի պէս՝ խնդակութեանց և ժպիտներուն հիւթը ծծելով։ Ուզեց հարցուրել Տէֆոնի բոլոր նաւագներն, և այնքան մեծ կարգէն էին, իւր համբերութիւն անոնցմէ սկսաւ և Պ. Օլպինէթի վրայ աւարտեց։

Մատանիներն, այսպիսի բաղաքավարութիւն մ'արժանապէս փոխարինելու համար՝ նախանձ աւետեց։

—Նախանձ՞, գոչեց Բականէլ։

—Այո՛, պարոն Բականէլ, պատասխանեց Պ. Օլպինէթի։

—Ճշմարիտ նախանձ, ճշմարիտ սեղանի վրայ, սպասով և անձեռոցով։

—Անշուշտ, պարոն Բականէլ։

—Ուր ոչ ապուխտ պիտի ուտուի, ոչ կարծր հաւկիթ, ոչ ջայլեանի խորտո՞ւք։

—Օ՜, պարո՛ն, պատասխանեց մատակարարը վիրաւորուելով իւր արհեստին մէջ։

—Եւ չուզեցի վիրաւորել զձեզ, բարեկա՛մ, ըսաւ գիտնականը ժպտելով։ Բայց ամենէ մ'լ՝ վեր այս էր մեր սովորականն, և կը ճաշէինք, ոչ թէ սեղանի առջեւ նստած, այլ գետնին վրայ տարածուած, երբոր ծառոց վրայ հեծած չլինէինք։ Ուստի ձեր ծանուցած նախանձն երաշ մը, կեղծիք մը, եղկերաւաքաղ մը թուեցաւ ինձ։

—Վերեմն երթանք ստուգենք իրակա՞նութիւնը, պատասխանեց տիկին Էլէնա, որ չէր կրնար բանել դիւր ծիծաղ։

—Աւասիկ թեւս, ըսաւ կնահանգ աշխարհագրին։

—Ձեր Ազնուութիւն հրաման մ'ունի՞ ինձ Տէֆոնի համար, հարցուց Ճոն Մանկլը։

—Նանահաչէն յետոյ, սիրելիդ իմ Ճոն Մանկլը, պատասխանեց Կէնարվան, ընտանեկան ժողովով պիտի քննենք մեր նոր արշաւանաց հիմնագիրը։

Շոգենաւին ուղեւորքն և դեռատի նաւապետը քառակուսին ի՞նչու Հրամանատուեցաւ մեքենավարին որ չոգիի վրայ կենայ, որպէս զի առաջին նշանը տրուելուն պէս կարենայ ճանքաչ ելնել։ Հաղորդապետը, նոր ածիլուած, և ուղեւորք, արագ յարդարանքէ մ'զինի, սեղան նստան։

Մեծ ախորժակով կերուեցաւ Պ. Օլպինէթի նախաճաշն։ Յոյժ հմուեղ և մինչեւ իսկ գերազանց դատուեցաւ Բամբարոյ փառաւոր խնջոյքներէն։ Բականէլ երկու անգամ առաւ ամեն կերակուրներէն, մտաղ բաղութեամբ, ինչպէս ինք կ'ըսէր։

Այս ճամբով բան թելադրեց զՏիկին Կէնարվան հարցնելու թէ արդեօք սիրուն Ֆոանսացին կ'ընկնէր մերթ ընդ մերթ իւր սովորական մեղաց մէջ։ Հազարապետն և Լորտ Կէնարվան իրարու նայեցան ժպտելով։ Իսկ Բականէլ մարեցաւ խնդալէն, անկեղծաբար, և խոստացաւ փիւր պատասխան վրայ։ որ յառաջիկայ ուղեւորութեան միջոցին բնաւ չդրծէ մտաղբաղութիւն։ Յետոյ իւր ճամբազանաց և Քամբէնի գործին վրայ տրած խորին ուսանց պատուութիւնն բրաւ յոյժ զուարճալի կերպիւ։

(Շարունակ.)

(*) Ողջոյն։

անգլ. թերթի մէջ, արդէն գոյացած է գրէթէ։ Անգլիա աֆղանեան սահմանագլուխը պիտի գծէ Ռուսիոյ նպաստաւոր կերպիւ, Բենջէէի դէպքին քննութիւնը վերապահելով, սա պայմանաւ որ Ռուսիա հանդիսապէս խոստանայ չգրաւել զՀերաթ։ Հաւանօրէն Ռուսիա պայմանաւոր խոստումմը պիտի տայ, և Պ. Կլատսդոն ադով պիտի չատանայ, խաղաղութեան պահպանման սիրոյն համար։ Թէեւ Անգլիա կը պատրաստուի պատերազմի, բայց անգլիական ազգին մեծամասնութիւնը կը փափաքի խաղաղութեան։ Եթէ Ռուսիոյ զինուորական պատիւն անվթար մնայ, Զարն ևս կընայ յաղողիլ խաղաղութիւնը պահպանելու, և ցորչափ Բոմարֆի ընթացքը չպարուսի և Բենջէէի դիւցազնն ետ չկանչուի, անվթար է Ռուսիոյ զինուորական պատիւն։ Այս պարագայից մէջ, Ռուսիոյ զինուորական կուսակցութիւնը, մանաւանդ Անգլիոյ չափաւոր ընթացքին առջեւ, երկիրն ի պատերազմ մղելու փոքր իշատ բանաւոր շարժառիթ մը չունենար։ Այսպէս, հաւանութիւնք խաղաղութեան կողմն են։ Բէկ և այսօր, և ուրախ ենք որ ներկայ շաբաթը խաղաղութեան յուսերով փակելու կարող կը լինինք։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀԵՌԱԳԻՐ ՄԵՐ ԹՂԹԱԿՑԷՆ

ՀԱՆԳԻՍԱՒՈՐ ԵՐԳՈՒՄԸ

ԷՋՄԻԱԾԻՆ, 1 Մայիս. (Ն. Տ.) (Ուրբաթ). Եբկպ. ժամ 7.

«Այսօր Պատգամաւորը Վեհարանէն հանդիսաւոր կերպիւ գնացին Իշման Տաճարն, ուր Պատարագ մատուցուեցաւ մեծահանդէս արարողութեամբ։

«Յետ Պատարագին, Իշման Տեղւոյն մէջ, Պատգամաւորը օրինական երդումն ըրին։

«Յոգնախուռն բազմութիւն ժողովրդեան, Էջմիածնի շրջակայներէն և աւելի հեռաւոր գաւառներէ համախմբեալ, հանդիսատես եղաւ բոլոր այս գործողութեանց։

«Խրիմեան Արքազանի ընտրութիւնն այժմ հաւանական կը կարծուի։

«Վաղը [շաբաթ] պիտի կատարուի քառանուն ցանկի քուէարկութիւնը։»

Աւասիկ Պատգամաւորաց երդման օրինակը։

«Ես ի ներքոյ անուանեալս խոստանամ և երդնում յանուն ամենակարողին Աստուծոյ, առաջի սրբոյ Աւետարանի Նորա, առ այն թէ ցանկամ և պատրաստ եմ յայսմ առաջիկայ ընտրութեան ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի Ամենայն Հայոց վասն գվախառոր կառավարութեան Սրբոյ Լուսաւորչին Եկեղեցւոյ Հայոց և ծայրագոյն տեսչութեան եկեղեցականաց Նորին՝ ըստ մաքուր խղճի մտաց և պատուոյս առանց իրիք աչառութեան և տեսչական անկողմնութեանց, ի բաց հերքելով յինէն զամենայն մխանս թշնամութեան և կամ զրպիսի և իցէ կասս մերձաւորութեան և բարեկամութեան՝ ընտրել ի մէջս հոգեւորականաց հայրենի եկեղեցւոյ խմբ զայնպիսի անձն, զոր և ըստ բարեմասնութեանց հանձարոյն և խրթի մտաց առաւել ընդունակագոյն և արժանաւորագոյն համարիս ես, և յորմէ ակն ունիմ զի նա ի կատարումն պարտաւորութեանց իւրոց, զոր դնի ի վերայ նորա այս վեհ ասպնան հոգեւոր, հանդիսացուցէ զինքն ջերմեռանդ պաշտօնեայ Աստուծոյ և հոգունակ տնօրէն բարօրութեան և օգտի Եկեղեցւոյն Քրիստոսի և յանձն եղեալ հայրապետական իշխանութեան նորա բանաւոր հօտին Քրիստոսի։ Իսկ եթէ այլ ազգ ընթացայ, յայնժամ իբր անհոգ ոմն օգտին Եկեղեցւոյ և ճշմարիտ որդւոց այնորիկ, յորում կայանայ և տեսչական օգուտն իմ, ենթադրեմ զանձն մեղադրանաց եղբայրակցաց իմոց։ Իսկ ի հանդերձելումն՝ պատասխանատուութեան առաջի Աստուծոյ և ահեղ դատաստանի Նորա։ Ի վախճան երդմանս վասն անաչառ ընտրութեան հաւատարիմ դրանս և գլաչ Քրիստոսի իմոյ, ամէն։»

Կաթողիկոսական ընտրութիւնը վաղը կատարի եւ հետեւաբար ընթերցողը երկուշաբթի աւուր Ապրիլի մէջ պիտի գտնեն վերջնական արդիւնքը։

Այս լսենք թէ Սրժ. Մկրտեան Հայրն ևս հեռագրեր է ի Պատրիարքարան, տեղեկութիւն խնդրելով Խրիմեան Սրբազանի վրայօք տարածուած զրոյցներու նկատմամբ, (զորս իւր նախընթաց եւրկիրեան հեռագրով կը ծանուցանէր մեր Թղթակից), և Պատրիարքարանն հարկ եղած պատասխանը տուեր է։

Ամեն. Ս Պատրիարք Հօր հրաւիրանօք, Կրօնական ժողովն այս երկուշաբթի օր ի նիստ պիտի դումարի Պատրիարքարանին մէջ, ընդ նախագահութեամբ Նորին Ամենապատուութեան։

Կը լսենք թէ Ս. Պատրիարք Հայրը, Քաղաքական ժողովոյ առաջին նստին մէջ որում նախագահեց այս չորեքշաբթի, Ազգին բռնել պէտք եղած ներքին և յարաբերական քաղաքականութեան վրայ իմաստասէրաբար տեսութիւն մ'ըրեր է այնպիսի համոզիչ լեզուաւ մը, որ յոյժ լաւ տպաւորութիւն ըրեր է ներկայից վրայ։

Թուրքիոյ բոլոր հայաբնակ գաւառներէն՝ Կարնէն, Վանէն, Սեբաստիայէն, և այլն, հեռագրեր սկսած են հասնիլ ի Պատրիարքարան, Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան Պատրիարք Հօր ի Կ. Պոլիս գալուստն եւ Պատրիարքական բարձր պաշտօնը շնորհաւորող։

Կը լսենք թէ Ս. Պատրիարք Հայրը Պատրիարքարանի Դիւանատան յանձներ է ծրար մը շնորհաւորական նամակներու և հեռագրերու, զորս յերուսաղէմ իւր ընտրութեան օրէն ի վեր ստացած էր ոչ միայն Թուրքիոյ թեմերէն, այլ նաև Հնդկաստանի, Պարսկաստանի և այլ հեռաւոր վայրերու հայ դպրոցականութիւններէն և երեւելի ազգայիններէն։

Ատրպատականի վիճակին առաջնորդ Արժ. Ճերմակեան Վարդապետի վրայօք անհաճոյ լուրեր կ'առնուին Դաւրէժէն, և այն տեսակ արարքներ կը պատմուին որք պատուաբեր լինելէ շատ հեռի են իրեն նկատմամբ։

Ցաւալի է որ այդ կարեւոր վիճակին առաջնորդը փոխանակ իւր արթուն հովիւ իւր հօտին բարօրութեան հսկելու, խռովութեան և դայթակղութեան առիթ կ'ընծայէ։ Կը յուսանք որ Արժ. Ճերմակեան փոխէ իւր ընթացքն և բոլոր այժմ ու աշխատութիւնը նուիրէ իւր խնամոց յանձնուած վիճակին յառաջիմութեան։

Որքան որ հրատարակեցինք երէկ թէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, ըստ խնդրանաց Մայր Եկեղեցւոյ Դպրաց դասուն Ս. պատարագ պիտի մատուցանէ վասն ի Մայր Եկեղեցի, սակայն Ն. Սրբազնութիւնն յոգնած լինելով յայտներ է թէ չպիտի կրնայ պատարագել այս կիրակի։

Ցաւօք կը ծանուցանենք թէ Նիկոմիդիոյ ազգայիններէն Մեծ. Խոսրով էֆ. Էսկիճեան կնքեր է իւր մահկանացուն։ Հանգուցեալն երկար տարիներէ ի վեր Ազգ. Առաջնորդարանի քարտուղարութեան պաշտօնը կը վարէր, եւ իւր ազգօգուտ ծառայութեամբ յոյժ օգտակար եղած էր Նիկոմիդիոյ վիճակին։ Իւր մահը մեծ կորստեան մէջ Նիկոմիդիոյ համար, զի դժուար պիտի լինի գտնել մէկը, որ այնչափ լաւ կերպով եւ կատարեալ ազնուութեամբ կարենայ վարել զայդ պաշտօնն։ Էսկիճեան էֆէնտի բազում տարիներ Մաչկա օրամերթի եւ ապա Ակէ-Էլի գործակալութիւնը կը վարեր ի Նիկոմիդիա, կանոնաւոր գործունէութեամբ։

Աւասիկ պատճէնն այն շրջաբերականին զոր Պատրիարքարանն յղեց առհասարակ քարոզիչս և աւագերիցուս մայրաքաղաքիս, և առաջնորդս և վանայրս գաւառաց, Ս. Պատրիարքի անունն և Ս. Պատարագի յիշատակելու համար։

Արժանապատիւ Եղբայր ի Քրիստոս,

Կոստանդնուպոլսոյ Պատրիարքական Աթոռն Հոգելոյս Տ. Ներսէս Սրբազան Հոր վախճանմամբ թափուր մնալով՝ ըստ Կայսերական բարձր հրամանի նոր Պատրիարքի ընտրութեան համար պէտք եղած օրինական գործողութիւններն կատարուեցան Ազգային Սահմանադրութեան տարմաղրութեանց համաձայն, և հետեւապէս յառաջին Ազգային Երես խնամական ժողովոյ Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոսն Վեհապետական Կոստանդնուպոլսոյ աթոռոյն Պատրիարք ընտրուեցաւ բացարձակ առաւելութեամբ քուէից, և իւր ընտրութիւնն հաստատուեցաւ Կայսերական Բարձր Իրատեսով։

Ուստի այսու շրջաբերական գրով կը յանձնարարեմք Ձերում. Արժանապատուութեան որ յետ այսորիկ ի Ս. Պատարագի նորընտիր Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոսի անուան յիշատակութիւնն կատարել առաջ, և սոյն մասք հանդերձ ուղղէք նաեւ Ձեր Հոգեւոր հովութեան ներքեւ գտնուող համայն Եկեղեցեաց հոգեւոր պաշտօնէից։

Զսոյն որոշում Կրօնական ժողովոյ հաղորդելով Ձեզ,

Կ. Պոլիս ՄՆԱՏԻՐ ԱԳԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՆ

17 Մարտ 1885

Մասկուայէն կը հաղորդեն թէ փետրուար 24ին Գասպարեան հիւանդանոցի համարատուութեան նստի ժամանակ Մեծ. Պ. Ե. Անանեան առաջարկեր է հանգանակութիւն բանալ հանգուցեալ Սուրենեան Տէր Բակոբ քահանային ի յիշատակ շիրիմ մը կանգնելու համար։ Սիրով ընդունուելով այս առաջարկ, նոյն ժողովին մէջ իսկոյն 700 ռուբլի ստորագրուեր է։

Այն ժողովի մէջ յիշատակուեր է և Հայ ազգի լուսաւորութեան մշակ հանգուցեալ Ստեփաննոս Նազարեանի անունը և առաջարկուեր է նորա դերեզմանն ևս վայելուչ շիրիմով մը զարդարել։ Այս նպատակաւ ալ իսկոյն 400 ռուբլի ստորագրուեր է. հանգանակութիւնք կը շարունակուին։

Գոհութեան արժանի է Մոսկուայի Հայոց այս ընթացքը որք հակառակ իրենց սակաւութիւնեան, արժանապէս կը գնահատեն ազգային գործիչները։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արտաքին գործոց Նախարար Ասիմ փաշա Նախընթաց օրն արտաքին թղթակցութեանց դիւանի Տնօրէն Նասիմ և առաջին թղթակցման Տնօրէն էֆէնտիներու հետ Բարձր. Մեծ Եպարքոսին քով երթալով, քանի մը կարեւոր խնդրոց մասին երկար խորհրդակցութիւն մ'ունեցաւ։

Նուէր Նորվէկիոյ թագուհին՝ ընկերակցութեամբ Իօժէն իշխանին և կայս. թիկնապահ Ահմէտ փաշայի, իւր տրամադրութեան ներքեւ դրուած յատուկ շոգենաւով նախընթաց օրը Գատրգիւղ գնաց ուր արժանաւորել մեծարանօք ընդունուեցաւ տեղական իշխանութեան և թաղապետութեան նախագահ Մաչուք պէյի կողմէ։ Թագուհին շրջեցաւ գիւղն ալիտալ կողմերն, ապա Իսկիւսար անցնելով այցելեց Տէվրիշներու Թէքէն և Երեկոյին Կղզի վերադարձաւ։

Օսմ. Կայս. Պանքայի տնօրէն Պ. Ֆօսթէր որ Ամէնք գնացած էր երկու շաբաթէ ի վեր, երէկ առաւօտ մայրաքաղաքս վերադարձաւ իւր որդւոյն հետ։

Սէր-Ճէյմս-Կազէթ լրագիրը գիտել կուտայ թէ ինչպէս Խրիմեան պատերազմին ծագման ժամանակ, նոյնպէս և այժմ Կ. Պոլսոյ անգլիական դեսպանատան գործերը կը կառավարուին գործակատարի մը ձեռամբ։ 1854ին Բ. Դրան մօտ բրիտանական գործակատարն էր Ռօզ գնդապետն՝ այժմ Լորտ Սթրատնարն։ Այժմ, կը յարէ յիշեալ լրագիրը, դեսպանատան գործերը կը վարէ Սըր Ուիլիամ Ուայթ որ մեծ հրմտութիւն ունի արեւելեան խնդրոց մասին։ Եղեռնախնութեան ժամանակ (1863) Վարչական անգլիական հիւպատոսը պաշտօն կը վարէր, և Սերպիոյ և Ռումանիոյ մէջ գիւանագիտական մեծ փորձառութիւն ստացած է։ Սը. Ուիլիամ Ուայթ քարտուղար եղած է նաև այն Դեսպանախորհրդոյն որ 1877ի անկիլ-ռուսական պատերազմէն առաջ գումարեցաւ ի Կ. Պոլիս։

Պերլինի օսմանեան դեսպանատան նախկին քարտուղար Լուտա պէյ՝ հաշուակալութեան ատենի թարգման անուանեցաւ։

Թէրթիսանը Հաֆէզ կիմանայ թէ Թուրք վարժարանաց ուսմանց ծրագիրը բարեփոխելու պաշտօն ունեցող մասնախմբի անդամից մանք առաջարկած են ֆրանսերէնը դուրս հանել ծրագրէն։

Թուրք լրագիրը թէեւ կը հրատարակէ այդ տուր յարելով թէ այդ մասին խորհրդակցութիւնք տեղի կունենան, բայց ինքն իսկ հաւատ չընծայէր թէ այսպիսի տարօրինակ առաջարկութիւն մը ներկայացուած լինի մասնախմբին։

Փարիզի Կոլէճ Տէ Ֆրանս լրագրոյն մէջ Իսլամութեան վրայ հրատարակեալ յօդուածի մը մէջ կը կարդանք թէ Զաբրին իշխանութեան ներքեւ կայրին երկու միլիոն Թուրք բնակիչք. ասոնք 3483 մէկէմ, 620 մէտրէսէ ունին և 15000 հոգի կը ծառայեն կրօնական գործոց մէջ։

Արքունի բժշկական վարժարանէն ելնող եւ Հայաստան-Փաշայի զինուորական հիւանդանոցին մէջ գործնական բժշկութեան պարապող բժիշկներէն հինգ հոգի իրենց ուսմանները կատարելագործելու համար Եւրոպա ղրկել որոշուած լինելով, փափաքողներէն 25 հոգի անցեալները քննութիւն մը անցուցին ի ներկայութեան յիշեալ վարժարանի բժշկական մասնին։ Եւ որովհետեւ դիրուելիք աշակերտները պարտին ֆրանսերէն լաւ հասկնալ, տակաւին որոշուած չէ թէ որո՞նք պիտի ղրկուին։

Օսմ. կայսերական Պանքայի թարգման Ֆօշէ Անթուան էֆէնտի երէկ առաւօտ Կայս. պալատը ճաշի հրաւիրուեցաւ։

Կ. Պոլսոյ առեւտրական Համիտիյէ վարժարանն որ Վեհ. Սուլթանին հովանաւորութեան ներքեւ կը գտնուի, թոշակաւոր 200 աշակերտ ունի այժմ որք կը վճարեն ամսական կէս կէս ոսկի որով ամսական հարիւր ոսկւոյ եկամուտ մը կը գոյանայ։ Աշակերտք կը հագնին պաշտօնական համազգեստներ նման եւրոպական վարժարանաց աշակերտաց համազգեստներուն։ Առեւտրական նախարարութիւնը վիճակահանութիւն մը կազմակերպած է ի նպաստ յիշեալ վարժարանին։

Տարեկան հարցքննութիւնք կ'ըսկսին 18–20 օրէն։

Այս հինգշաբթի օր տեղի ունեցաւ «Պանք տը Թօնթանթինօբլ» դրամատան բաժնետերաց ընդհանուր ժողովն, որոյ կը նախագահէր Պ. Քօրնիլ։ Ներկայ էին 45 բաժնետերաց որք 18,000 բաժին կը ներկայացնէին։ Վարչական Թղթատարն տեղեկագիրն որ կարդացուեցաւ նախ, ցոյց կուտար թէ յիշեալ դրամատունն ամեն տեսակէտով բաւական կացութեան մը մէջ գտնուելով հանդերձ, այս տարի չէր կրցած իրականացնել այն շահեր որոյ վարժուած են իւր բաժնետերք։ Այսու հանդերձ, հակառակ ինչ ինչ ձախորդ պարագայներու, անխախտ պահուած է իւր դրամագլուխ և պահեստի գումարներն։ Այսպէս ընկերութիւնն ունի այժմ 660,000 ոսկւոյ դրամագլուխ մը, դրամագլխոյն մէկ հինգերորդին հաւասար կանոնական պահեստի գումար մը (123,947 ոսկի) ինչպէս նաեւ մասնաւոր պահեստի գումար մ'ալ 62,247.08 ոսկւոյ։

Տեղեկագրի ընթերցումէն ետոյ, նախագահն յայտնեց թէ Պ Անտրէ Սինկոօ (հիմնադիրն յիշեալ Պանքային) եւ Պ. Իւլիս Նէկրոպօնթէ հրաժարած լինելով Վարչական Խորհրդոյ անդամակցութենէն, անոնց յաջորդած էին Պ. Թ. Մարքօկորտաթօ, Պ Լ. Լաժէնիտէս եւ Պ. Բ. Սթէֆանովիչ։

Էյուբէ կիմանայ թէ Բ. Դուռը զեկուցեր է Լանտրայի Օսմանեան արտասովոր դեսպան Հասան Ֆէէմի փաշային թէ իւր պաշտօնը կրնայ վերջացած նկատուիլ, և պատրաստ գտնուի Կ. Պոլիս վերադառնալու համար։

Ասկէ առաջ Վեհ. Սուլթանը բարեհաճած էր 700 ոսկւոյ գումար մը յատկացնել Սիլիսթրէի և Բուսճագի գաղթականաց ընակութեան համար գիւղ մը հաստատելու։ Այս գիւղ որ Պրուսայի գաւառին Պղիվատին կոչուած տեղն ոչ շատ հեռու է, աւարտած է և կը կոչուի Հէտիէյէ։ Ն. Կայս. Վեհափառութիւնը նկատելով որ գաղթոց և աղթատեղի կը պակսին անդ, հրամայեց որ իւր անձնական դանձուն ծախիւք նախակրթարան մը և փոքր մզկիթ մը կառուցուին յիշեալ գիւղին մէջ։

Բեգրպուրկէն կը հեռագրեն թէ ռուսերէն խնդրոյ առարկայ թէ Պ. Ֆօնթէօն թէ Պ. Օնու պիտի կոչուին Լիզպոնի դեսպանութեան պաշտօնին որ բաց մնացած է Պ. Արապաֆի մահուամբ։ Պ. Օնու արքան համամիտ չեր եւ իր այդ պաշտօնն ընդունելու և նախամեծար կը համարի Պ. Պոլսոյ դեսպանատան խորհրդական մնալ։ Իսկ Պ. Ֆօնթէօն Վիէննայի դեսպանատան խորհրդական է։

Հանգաց և անտառաց պաշտօնատան տնօրէն Քուլուսմեան Պետրոս էֆէնտիի հիւանդութիւնք՝ զոր ծանուցինք, ծանր երեւոյթ մը չունի բարեբաղդաբար։ Պետրոս էֆէնտի քիչ օրէն պիտի կրնայ իւր պաշտօնի գլուխն անցնիլ։

Նախընթաց թուով մը Դալաթիոյ թերթէ մ'առնելով հրատարակեցինք թէ երկրագործական Դրամատան մը հաստատման համար կայս. կառավարութեան ներկայացեալ ծրագիրը մերժուած է։ Ի վերջէ մեր առած մանաւոր տեղեկութեանց համեմատ, այս տեղեկութիւն անտարակոյս է։ Կառավարութիւնն իւր վերջին որոշումը տուած չէ տակաւին և խնդիրը քննութեան առարկայ է. և ըստ որում երկրին ժողովրդեան էն կարօտ մասին օգնամտոյց լինելու նպատակ ունի վերոյիշեալ ձեռնարկը, կառավարութիւնն յոյժ տրամադիր կերեւի ընդունիլ զայն ինչ ինչ վերապահումներ ընելով քանի մը կէտերու վրայ։

Անգլեցի մեծահարուստ Նբրթըմ պրէյնի դուրսն որ զրօսանաց պրոյտ մը կրնէ, այս պահուս Հնդոս կը գտնուի ուր գնացած է կիպրոսէն։

Սինա Լերան յոյն վանուց միաբանութիւնք պաշտօնապէս ծանոյց Բ. Դրան, իւր հոգեւոր պետին՝ Տ. Բաշխրաթի արքեպիսկոպոսի մահն։ Եպիսկոպոսական այս անկախ աթոռոյն վանահարք սովորաբար կը բնակին ի Դամիրէ որ կեդրոնն է մարանութեան վարչութեան, որոյ անդամք կը գտնուին ի Թուրքիա և յայլուր իրենց միաբանութեան կալուածոց և երկրագեցաց մէջ։ 1883 ի դեկտեմբերուն ժամանակ Տ. Բաշխրաթի Դամիրէէն քաշուած էր Սինա լեռան բարձանց վրայ գտնուող պատմական վանքին մէջ առանձնացած ապրելու համար և վախճանեցաւ Բարեթ գիւղին մէջ։

Հանգուցեալ վանահօր յաջորդին ընտրութիւնը պիտի կատարուի ի Դամիրէ, միաբանութեան ընդհանուր ժողովոյն ձեռամբ, և անոր անդամոց մէջէն։

Սինա Լերան վանքն որ միաբանութեան կեդրոնն է, մեծ յարգանք կը վայելէ Իսլամաց կողմէ և Մարգարէն և Իսլամութեան առաջին Թալիֆայը բազում առանձնաշնորհումներ տուած են անոր։

Արեւելեան Բումէլիի այլև այլ գաւառակաց մէջ, կը պատմէ Էյուբէ-Փիլիպէի լրագրերէն առնլով, սպանութեան և չարագործութեան դէպքեր իրարու կը յաջորդեն։ Ի մէջ այլոց կը յիշուի Թօպաճ Հասան անտառապահ մը որ սպաննուեր և մարմինը փոսի մը մէջ նետուեր է պուլգարաց ձեռամբ։ Բարլովայի Միւտէրիզի գիւղին մէջ պուլգար մը իւր թուրք դրացւոյն տունը մտնելով դուրս վներ է զայն բռնութեամբ, գաղելով «Այժմ այս տեղ Գուլգարիան է։ այսուհետեւ մենք թուրքերը պիտի ծեծենք այսպէս և պիտի ջախջախենք զանոնք»։

Քարքաարի մէջ թուրք մը մօտակայ գիւղէ մը վերադարձած ժամանակ, Կօմիթա Բէյ.քօ անուն պուլգար մը դէմը կելնէ, և դաշոյնի հարուածով մը գետին կը փռէ զայն յեղակարծ, գոչելով «Երկար ատենէ ի վեր կուզէի թուրք մը սպաննել. ահա լաւ առիթ մը»։

Այս դէպքերը Փիլիպէի լրագրաց հաղորդող անձինք կ'ըսեն եղեր թէ տեղական իշխանութիւնք փոյթ չեն ըներ բնաւ ձերբակալելու այն չարագործներն որք թուրքերը կսպաննեն և կը չարչարեն։ Երկու տարուան մէջոցին, մի միայն Բարլովայի գաւառակին մէջ 30 հոգի սպաննուած են, որոց 29ը թուրք են և 1ն հրեայ։ Մարդասպանաց և ոչ մին ձերբակալուած է։

Վերջերս Մանիֆէստօրէն առնլով պատմեցինք թէ Սելանիկի նաւահանգստէն մեկնող օսմանեան պոհակ շոգենաւը խրած էր Բարա-Պուրունի մօտ։ Յիշեալ լրագիրը կը պատմէ այժմ թէ Տոլմ-Պահչէ շոգենաւն, հրամանատարութեամբ Սալաքա գնդապետին, օգնութեան գնացած լինելով, յաջողեր է ազատել խրեալ շոգենաւն։

Հելլ լրագիրը Արեւելեան Բումէլիի Եղմանական տնօրէնութեան կողմէ իրեն հաղորդուած վիճակագրէ մը քաղելով հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ Փիլիպէի բնակչաց թուոյն վրայ, ըստ վերջին մարդահամարի։

Փիլիպէի մէջ կան այժմ 18,189 այր և 15,255 կին, ընդ ամենն 33,442 բնակիչ, որոց 7,144ն Իսլամ, 14,158ը Պուլղար, 5,497ը Յոյն, 2,487ը Կաթոլիկ պուլղար, 2,168ը Հրեայ, 1,061ը Հայ, 170ը Բողբաքան պուլղար, 112ը Զինկեանէ և 108ը զանազան կրօնքի պատկանող։

Այս բնակչաց 14,545ն 21 տարեկանէն աւելի են, 12,156ը 20էն 40 տարեկանի մէջ են, 5,071ը 40ի և 60ի մէջ, 1590ը 60ի և 100ի մէջ, իսկ 83 հոգի 100 տարեկանէ աւելի են։

Տրապիզոն լրագրոյն մէջ կը կարդանք թէ ոչխարի տրոց տեսուչ մը Շարը անուն գիւղաքաղաքի ոչխարները հսկելու և ըստ այնմ որշեալ տուրքն ստանալու համար յիշեալ գիւղը գացած ատեն գիւղացիներէն քանի մը հոգի միաբանելով, իրենց հօտերը լեռ մը կը տանին, խոտ տալու համար քննութիւնէն, որպէս զի տուրք չը վճարեն տէրութեան։ Բայց այս նենգութիւնն իմացուելով, անոց ոչխարաց թիւն ևս կարձանագրուի։ Քննիչն մեկնիլէ յետոյ, յիշեալ գիւղացիք լեռն կերթան ոչխարները բերելու համար, բայց չեն վերադառնար։ Ի վերջոյ կիմացուի թէ գիւղացիք լեռան վրայ ձիւներու մէջ մնացած ոսած էին։

Ա Զ Գ

Մինչեւ հիմա գործածուած «Բարեզեղ Զամպարճեան» տառագրութիւնս փոխելով ասկէ ետքը «Բարեզեղ Գ. Սըվանճեան» գործածելու որոշում առած ըլլալուս, սոյն որոշումս յարգոյ հասարակութեան իմաց կուտամ այսու ազդարարութեամբ։

Բարեզեղ Գ. Սըվանճեան

2—2

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ի Ր Ք

ԳԱՂԻԵՐԻՆԻ Ի ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

(Ի պէտս Ազգային վարժարանաց)

Յօրինեաց

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Նոր եւ դիւրաւսոյց եղանակաւ պատրաստուած գասագիրք մէջ գաղիերէն լեզուի ուսուցման համար։

Կը ծախսուի ամեն հայ գրավաճառաց քով, ի գին 4 ղրուշի։ Կեդրոնատեղին է Արամեան տպարան, Յակոբեան խան։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԶԱՆՑ ՀԱՂԱՍ

ԻԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՑՈՅՍԵՐԸ ԿԸ ՁՕՐԱՆԱՆ

Լոնտրա, 1 մայիս

Վերջին տագնապի լուրերն պաշտօնապէս հերքուեցան։ այս իրողութիւն մեծապէս նպաստեց պատերազմի երկիւղները տկարացնելու։

Տէյլի Նիւ-ս կը հերքէ անգլիական կամ ռուս ոչ և է վերջնագրի յղումն։

Նոյն լրագիրը կը հերքէ նմանապէս Բորթ-Հաիթրնի (Ճաբանական ծով) գրաւումն ի Ռուսաց։

Լոնտոն, 1 մայիս

Կը հաւատան թէ Ռուսիա պիտի մերժէ Բէնջուտէի դէպքին քննութիւնը, բայց թէ չպիտի պանայ նոր բացատրութիւններ տալ—զորս Փոմարոթի իւր կողմէն պիտի հաւատայ թէ բնաւ դիտաւորութիւն ունեցած չէր ներ թէ։

Հաւանական է որ այս կարգադրութեանց շնորհիւ կարելի պիտի լինի վերսկսիլ բանակցութիւնները ուսմանաց գծման համար։

ՄԱԿԵՂՈՆԻԱ

Փարիզ, 1 մայիս

Բեգրսպուրկէն կը հեռագրեն առ թռ. «Պ. տը Կիրս յայտարարեց Թուրքիոյ եւ Աւստրիոյ դեսպանաց թէ Ռուսիա փութով պիտի յանձնարարէ Պուլղարաց՝ հանդարտ կենալ ի Մակեդոնիա. — Պ. տը Կիրս պարտաւեց Սերպիոյ անուղիղ աշխարհավարութիւնը. պնդեց թէ հարկ է իմացնել Ցունաստանի թէ իւր համահեղեղեական բաղձանքներ չեն պատասխաներ այն դրից զոր Ցունաստան կը բռնէ Եւրոպական տէրութեանց ներդաշնակութեան մէջ։

«Ի վերջոյ Պ. տը Կիրս հաստատեց թէ Ռուսիա խաղաղութեան փափաքող է։»

Յիթէնք, 1 մայիս

Նախարարութիւնը կազմուեցաւ հետեւեալ կերպիւ.

Պ. Տէլիեանի՝ նախարարապետ և նախարար արտաքին գործոց ու եկեղեցոյ։ Պ. Անթանոբուլօ՝ ներքին գործոց։ Պ. Մավրոմիխալի՝ պատերազմական գործոց։ Պ. Անթոնոբուլօ՝ դատական գործոց։ Պ. Զիզոմոս՝ կրօնական գործոց։ Պ. Ռոմա՝ ծովային գործոց։

Նախարարք այսօր պիտի կատարեն տօվրական երդումը։

Իսմիրնիա, 1 մայիս

Ապրիլ 21էն 30 Սուէզի ջրանցէն անցող նաւուց թիւն է 113 և տաննօրեայ տասոյթն 1,940,000 Ֆրանք։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

Ղալաթիա, 20 Ապրիլ

3 ամիս Լենտրայի վրայ պանքայի)	110 7/8
3 » » » (վճռվելիք)	110 1/2
3 » Բարիզ » (պանքայի)	22 85
» » » (վճռվելիք)	22 92 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՒՅ

Օսմանեան Քոնսոլիտ

	Դահեկան
Երեկ երեկոյ գոց. (Միաց. Դ. Յեր	16 7
Գլխաւորին գոցուելէն վերջը »	16 4
Բերայի մէջ »	— —
Առաւօտուն բացուելուս »	16 9
Բարձրագոյն գին	16 18 1/2
Նուազագոյն »	16 9
Կէս օրին	16 16 1/2

Փոխառութիւն 1858)	Ա. Սերի Գ. Կ. Ա. Ո.	29 20
» 1862)		
» 1860)		
» 1863)	Բ.	17 10
» 1872)		
» 1865)		
» 1869)	Գ.	16 15
» 1873)		

ԻՍԼԻՓԻԷ ԵԳԻՊՏԱԿԱՆ

Երեկ իրիկուն գոցուելուս	67 30
Այս առաւօտ բացուելուս	68 10
Կէս օրին	68 10

ԲԱԺՆԵՏՈՒՄՈՒ

Սօրիէթէ ժէնէրալ	Գ. Կ. Ա.	3 7
Քրէտի ժէնէրալ » »	Օ. Մ.	6 27
Պանք տը Գոնս » »	» »	5 10
Ռո. Շանժ է վալէօր » »	» »	3 30
Թրանսատլ » »	» »	265
Ռուժէյիի երկաթուղի	ֆր.	40 50
Օղլիկասիօն տը Բրիօրիթէ	»	310
Բասմեհէուղի Լաւրիօնի	»	61

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	գրշ.	100
20 ֆրանկոց	»	87 32
Անգլիական ոսկի	»	110 25
Ռօլ. Խրէերիալ	»	90 16
Ֆրիմից	»	51 15
Ռուսպլիթղթագրամ	»	9 32
» արծաթ	»	89 30
Յիսրին	»	8 35
ՄէՀ. արծ. (տարը)	»	107 38
Վենցոց	»	102 25
Հինգոց	»	102 20
ՄէՀիտլիք	»	99
Պլինտ	»	—
Թղթագրամ	»	—

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 1 Մայիս, ժամ 3 վայր. 15 երեկոյ

(Պորսան գոց է ոտնի պատճառաւ.)

Վիէննա, 1 Մայիս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	126 35
Օսմանեան երկաթուղի	49 50

Բարիզ, 1 Մայիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	գոց	107 50
» » 3 %		78 22 1/2
Օսմանեան քոնսոլիտ Սերի Դ.	բացուելուս	14 52 1/2
» » »	գոցուելուս	14 40
» » Սերի Բ.		
» » Գ.		
Օսմանեան երկաթուղի		
» ԲէՀիի բաժնեթուղթք		
Պանք Օթոման		
Գրէտի Լիոնէ		522 50
» Ֆոնսիէ		1297 50
Բասմեհատմ Լիոնի		1262 50
Սուէզի ջրանցք		1937 50
Ռուսական 5 % 1877ի		91
Իտալական Ռանթ		91 70
Եգիպտական միացեալ		308 7
